

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՈՒ ՆՐԱ 1910-1920ԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԹԵՐԹՕՆՆԵՐԸ¹

ԱՆՆԱ ԲԱԲԱՅԵԱՆ

annababayan646226@gmail.com

ՄՈՒՏՔ

Երգիծանքը, լինելով գրականության եւ հրապարակախօսության ամենաբարդ սեռերից մէկը, հայ գրականության եւ մամուլի մէջ ներկայանում է այնպիսի վառ անհատականութիւնների միջոցով, ինչպիսիք են Երուանդ Ստեանը, Յակոբ Պարոնեանը, Նշան Պեշիկթաշեանը եւ Լեւ Կամսարը: Այս ուսումնասիրության մէջ ներկայացում են իր ժամանակի լաւագոյն հասարակական գործիչներից եւ հայ երգիծական մտքի մեծագոյն ներկայացուցիչներից մէկի՝ Լեւ Կամսարի դարասկզբեան թերթօնները: Ուսումնասիրելով եւ առանձնացնելով պատմական նշանակութեան ստեղծագործութիւնները՝ փորձել ենք պատկերացում կազմել հեղինակի անձի, նրան յուզող խնդիրների, ինչպէս նաեւ ժամանակի կարեւոր քաղաքական եւ հասարակական իրադարձութիւնների մասին:

Կամսարն իր ինքնատիպութեան, սուր մտքի, վերլուծական եւ քննադատողական բացառիկ ունակութիւնների, իրադարձութիւնները անաչառ եւ համակողմանի ներկայացնելու իր ունակութեան շնորհիւ կարող է իրապէս համարուել իր ժամանակի լաւագոյն մտատրականներից մէկը: Հինգ տարբեր վարչակարգերի² օրօք ապրած եւ բոլորին նոյն անաչառութեամբ քննադատող ու ծաղրող հեղինակը, ենթարկուելով իշխանութիւնների կողմից բազմաթիւ ճնշումների եւ հետապնդումների, այնուամենայնիւ, կարողացել է դիմանալ ժամանակի քննութեանը եւ սերունդներին թողնել հարուստ ստեղծագործական ժառանգութիւն:

Երգիծաբանի թոռնուհու՝ Վանուհի Թովմասեանի ջանքերով պարբերաբար հրատարակւում են հեղինակի ցարդ չիրապարակւած էջերը³: Ստեղծուել են նաեւ նրան նուիրուած կայք եւ ֆէյսբուքեան էջ⁴, որտեղ առաջին ծանօթութիւնը կարելի է հաստատել մեծ երգիծաբանի հետ: Կամսարի թերթօնները եւ օրագրային անտիպ էջերից հատուածներ երբեմն ներկայացնում է hetq.am լրատուական կայքը ու բացայայտում շատերի համար դեռեւս անծանօթ հեղինակին:

Երգիծաբանի ստեղծագործութիւններին անդրադարձել է Սամուէլ Մուրադեանը իր *Գրական Հանգրուաններ*⁵ մենագրութեան մէջ: 2010ին Ռուպեր Հատտէճեանը իր «Պոռնոյտ Հայ Գրականութեան Քուլիսներուն Մէջ» շարքում հրատարակեց *Լեւ Կամսար՝ Այս Անծանօթը* հատորեակը, որտեղ ներկայացուած է երգիծաբանի կեանքն ու ստեղծագործութիւնը: Վերջերս՝ 2017ին լոյս տեսաւ Կարինէ Մարտիրոսեանի *Լեւ Կամսարի Օրագրային Արձակը* մենագրութիւնը: Չնայած հեղինակի

ստեղծագործություններն այժմ էլ վերահիրատարակում են եւ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժամանակակից ընթերցողների համար, Լեռ Կամսարի կեանքն ու ստեղծագործությունները դեռեւս լիարժէք եւ համակողմանի ուսումնասիրուած չեն: Հետեւաբար, Կամսարի կեանքին եւ ստեղծագործութեանը նուիրուած ցանկացած հետազոտութիւն արդիական է եւ կարող է նորովի ներկայացնել հեղինակին ու նրա ժամանակը:

Սոյն ուսումնասիրութեան մէջ ներկայացուած է Ի. դարասկիզբը Լեռ Կամսարի աչքերով: Անձնատրման, համեմատութեան եւ պատկերատրման այլ միջոցների կիրառմամբ գեղարուեստականօրէն հարուստ այս թերթօնները իրենց ամբողջութեան մէջ տեղեկատուական մեծ արժէք ունեն՝ պատմական առումով. դրանք Լեռ Կամսարին ներկայացնում են ե՛ւ որպէս հրապարակախօս, ե՛ւ որպէս պատմագիր:

Հայ ազգին վերաբերող թերթօնները բազմաշերտ են: Դրանք ներառում են թե՛ պատմական իրադարձութիւններ եւ թե՛ զուտ ազգային իրողութիւններ ու թերութիւններ, որոնց անդրադառնալով՝ Լեռ Կամսարը փորձել է տալ դրանց հասարակական հնչեղութիւն ու, մատնանշելով դրանց առաւել վատ կողմերը, դրանք շտկելու հնարներ առաջարկել:

Կամսարի գրած *Հայոց Պատմութիւնից* ոչ միայն կարող ենք ճանաչել մեր պատմութիւնը, այլեւ դասեր քաղել անցեալի սխալներից: Նրա ներկայացրած պատմութիւնը անսովոր է, բայց առարկայական: Յաճախ օգտագործելով գեղարուեստական անձնատրումը՝ նա անելի պատկերատու ու հետաքրքրաշարժ է դարձնում նկարագրուող պատմութիւնը:

Օրինակ՝ անձնատրելով կենդանական աշխարհը՝ Լեռ Կամսարը «Կենդանիների Համագումար» թերթօնում այլաբանօրէն ներկայացնում է արեւմտահայերի պատմութեան դառը անցքերը: Այստեղ յստակ երեւում են երիտթուրքերի հռչակած սահմանադրութիւնը, կեղծ խոստումներն ու լռզունգներն ու հայերի յետագայ ճակատագիրը: Ի վերջոյ, երգիծաբանը յանգում է եզրակացութեան, որ գիշատիչների հետ ազատ եղբայրութիւն ու հաւասարութիւն հնարատր չէ: Ինչ էլ լինի, մութն ընկնելուն պէս գիշատիչ գայլը այցելելու է իր քոյր ոչխարին ու յօշոտելու:

- Սրտբաց խօսիր, սիրելիս, դուն իմ եղբայրն ես, ի՞նչ կայ ամչնալու, յարեց նոր «քոյրը»:

- Անթոթութիւնէ կը նուաղի սիրտս...կուզե՞ս որ մեռնիմ...

- Ո՛հ, տրե մի արասցէ, ինչե՞ր կը խօսիս...

- Ուրեմն բեր քեզի քիչ մը ... ուրեմն...⁶

Պատմագիրներին յատուկ բառապաշարով ու երգիծանքի նուրբ երանգներով Լեռ Կամսարը պատմում է Վասպուրական աշխարհի հերոսական ինքնապաշտպանութեան ու դրա կարճատեւ անկախութեան մասին: Թերթօնում տեսնում ենք Արամ իշխանի (Արամ Մանուկեան) հանդէպ երգիծաբանի անսահման համակրանքը, ում նա վերագրում է

Վանի հերոսամարտի յաղթանակը: Արամ իշխանը պատերազմի ժամանակ քաջ զորավար էր, իսկ խաղաղության մեջ՝ հմուտ թագաւոր, ում իշխանութեան օրօք Վանում ծաղկում էին երկրագործութիւնն ու տնտեսութեան միւս ճիւղերը: Հեղինակն հիացմունքով է յիշում այդ օրերը. «Արամ Ա. ամբողջ 70 օր հայրաքար խնամեց իր ժողովուրդը: Ոչխար չունեցողին ոչխար փուսաւ, ծառ չունեցողին ծառ փուսաւ: Ժամանակի վարժապետները իրենց իսկ բերնով խոստովանած են, որ Արամի իշխանութեան օրոք բնաւ անօթութիւն զգացած չունին»⁷:

Ժամանակագրական կարգով դասաւորելով երգիծաբանի ստեղծագործութիւնները՝ յաջորդիւ տեղեկանում ենք Առաջին Համաշխարհային Պատերազմից յետոյ Հայաստանում ստեղծուած դժուարին կացութեան մասին: «Հայաստանն Ու Դաշնակիցները» թերթծում նկարագրուած են պատերազմի արարտից յետոյ Հայաստանի մեծ սպասելիքները, որի մէկ տոկոսն անգամ չիրականացաւ: Միամիտ Հայաստանը կարծում էր, որ պատերազմն իր նման փոքր դաշնակիցներին անկախութիւն շնորհելու համար է, ու այժմ ժամանակն է բարիքները քաղելու:

Անձնաւորուած Հայաստանը՝ կնոջ հետ միասին - ինչը շատ յատուկ էր հայ ազգային գործիչներին - նաւով ճամփայ է ընկնում՝ իր տուած զոհերի գնով վաստակած անկախութիւնը ստանալու, սակայն ֆրանսիական հող ուղք դնելու պահից սկսում է հիասթափուիւ: Այն առանձնայատուկ վերաբերմունքը, որին նա սպասում էր, իսպառ բացակայում էր: Միւս մանր ազգերի հետ Հայաստանն էլ պիտի սպասէր.

- Ի՞նչ կայ որ, դուն այս բոլոր ազգերէն աւելի՞ ես... Դուն ալ գնա՛ անոնց հետ խաղա՛, մինչեւ որ կարդան, թէ որուտ անկախութիւն կու տան, որուտ՝ ոչ:

- Ծանրմ, ախր ես մենակ անկախութեան համար չեմ եկեր, մեզի հաց պէտք է շուրափոյթ, սով է երկիրը... Կամ, վերջապէս, ես անոնց ընկե՛րն եմ, ո՞րը անոնցմէ ինծի չափ զոհ է փութեր...⁸

Հիասթափուած ու կոտորուած Հայաստանը, սակայն, հեռագրում է տուն. «Ամսոյս 18-ին հասանք Փարիզ. երկու անգամ փեսակցութիւն ունեցայ Բենամսոյին հետ. Միացեալ ու անկախ Հայաստանի հարցը վճռուած է դրական իմաստով: Կ'երթամ մեր Պօղոսին փունը...»⁹:

«Համառօտ Զեռնարկ Հայոց Պատմութեան» թերթօնը նուիրուած է Դաշնակցութեան իշխանութեան դժուարին ժամանակաշրջանին, երբ երկիրը ասպատակւում էր չորս կողմից, ու իշխանութիւնն անկարող էր դիմագրաւել ճշմանը: Անգամ այս լուրջ ու ծայրայեղ վտանգաւոր իրադարձութիւնները նկարագրելիս Լեւո Կամսարը չի մոռանում ու չի կորցնում երգիծանքը.

- Մեծ գութ. բոլոր պահեստները թշնամուն թողինք ու առանց գնդակ նետելու փախանք:

- Բարոյական յաղթանակը վերցուցի՞ք հետերնիդ:

- Այո:

- Մեծ անտրիս ըսէ, կտրի՛ճ, դարձիր հրամանադարիդ ըսէ, թող իր պանծալի փախուստը շարունակէ, շուրջով օգնական զօրք կը դրկենք...

Այսպէս շարաթ մը ամբողջ գումկաններն անտրիս բերին բարոյական յաղթանակի, յաղթանակ մը, որ մինչեւ այսօր ալ չէ դադրած խեղճ ազգերու սեփականութիւնն ըլլալէ¹⁰:

«Հայաստանն Ու Վրաստանը Կեչի Ծառին Տակ» թերթօնում տեսնում ենք Հայաստանն ու Վրաստանը, որոնք հին հարեանների պէս կեչու ծառի տակ նստած գրուցում ու յիշում են իրենց ոչ-վաղ անցեալը: Նրանց երկխօսութիւնից պարզ է դառնում, թէ ինչ դժուարին կացութեան մէջ են յայտնուել երկրները՝ հաւատալով Անգլիայի խոստումներին: Դառնացած Հայաստանը նաեւ կշտամբում է դժուարին պահին իրեն մէնակ թողած ու դաւաճանած դրացուն. մէկամէկ յիշեցնում, թէ ինչպէս 1918ին, երբ հայը կեանքի ու մահուան կռիւ էր տալիս թուրքի դէմ, Վրաստանը թիկունքից արշաւեց Լոռու եւ Ախալքալաքի վրայ եւ թէ ինչպէս թիֆլիսաբնակ հայերին ահաբեկեց ու աքսորեց ու, փակելով Բաթումի ճամփան, նրանց սովի մատնեց: Հայաստանի խօսքերից նաեւ իմանում ենք՝ «...Մեզի Տաճիկին հետ կռուի հանեցիր ու ետեւէն չէզոք զօրին գրաւեցիր: Դուն մարտնեցիր, որ Ֆրանսիան յիսուն հազար փութ բամբակս փախցուց»¹¹: Այդուհանդերձ, Հայաստանը ներողամիտ է ու շարունակում է բարեկամութիւնը դրացու հետ, սակայն՝ արդէն առանց վստահութեան:

Հայաստանի Ա. Հանրապետութեան ժամանակաշրջանի պատմութիւնը ամբողջացում է «Պատմութիւն 1918 Թուի Կովկասեան Անցքերու» ընդարձակ թերթօնում¹²: Այստեղ ներկայացւում է ոչ միայն Հայաստանի, այլեւ հարեան պետութիւնների՝ Վրաստանի ու Ադրբեջանի պատմութիւնը: Լեւ Կամսարը նախ նկարագրում է երեք ազգերին՝ հային՝ որպէս վաճառական, վրացուն՝ «կանդուկտոր» (երկաթուղային գնացքների ուղեկցող), իսկ ադրբեջանցուն՝ որպէս մսագործ: Այնուհետեւ երգիծաբանը առաջ է քաշում այս «եղբայր» պետութիւնների անհաշտութեան պատճառը, որն էր կայսերական տարբեր պետութիւններին նախապատուութիւն տալը: Հայաստանը համակրում էր Անգլիային, Վրաստանը՝ Գերմանիային, իսկ Ադրբեջանը՝ Թուրքիային:

1918ին Յունուար-Մայիս ամիսներին, երբ Թուրքիան յաակնում էր Կովկասեան տարածաշրջանին, Հայաստանը միակն էր, որ լրջօրէն մտահոգում էր ու պատրաստում էր գէնքով կոտուել թուրքի դէմ: Նա չէր վստահում ո՛չ Ադրբեջանին, ում «շուրթերը ժպիտից դողում էին» Թուրքիային միանալու մտքից, ո՛չ էլ Վրաստանին, որի մասին գրում է. «Ան գիտէր իր եղբոր հեղինդուն բնութիւնը. գիտէր, որ փունէն մինչեւ եկեղեցի հասնիլը փասը փեսակ Աստուծոյ երկրպագել գիտէր, որ անոր սկզբունքները արեւածաղկին նման երեսն արեւին կը պոկուէր»¹³:

Նոյն թերթթնում երգիծաբանը բացայայտում է նաեւ Թուրքիայի նենգ, իսկ Հայաստանի միամիտ բնույթը: Թէ ինչպէս Հայաստանին միամտացնելով՝ Թուրքիան վերցնում է Երզնկան, Մամախաթունն ու Կարինը: Ինչպէս միշտ հայը փորձում է առանց կռուի, խրատներով խելքի բերել հակառակորդին. «Կարնոյ մէջ կար 600 թնդանօթ անսպառ ոռումք եւ Կաճիկի ունեցածէն անելի զօրք, ուզենարնէ ջարդոսփշուր կ'ընէր զայն. սակայն Հայաստանին նպատակը չէր կազմեր մարմնական պարփոժներով խելքի բերել հակառակորդն, այլ կրթիչ միջոցներով, նուրբ ձեւերով հասկցնել իր միտքը...»¹⁴: Կարինը կորցնելուց յետոյ միայն սթափում է Կովկասը ու որոշում կռուել: Իսկ թուրքը, քրիստոնէական վերաբերմունքից քաջալերուած, շարունակում է առաջխաղացումն ու հերթով գրաւում հայկական ու վրացական քաղաքներ:

Այնուհետեւ տեսնում ենք, թէ ինչ պայմաններում բաժանուեցին կովկասեան եղբայրները: Գերմանիայի դրոյմամբ Վրաստանն առաջինը դուրս եկաւ Անդրկովկասեան Սէյմից, ինչը դառնօրէն վշտացրեց Հայաստանին: Նրա օրինակով անկախութիւն հռչակեցին նաեւ Հայաստանն ու Ադրբեջանը, սակայն տարածքը, որ մնացել էր Հայաստանին անկախութիւն հռչակելու համար հին արեւները թագաւոր մը կը նուիրէր գիշեր մը իրեն աղուոր հեքիաթ պարմող աղախնին»¹⁵:

Վերջում, Լեւո Կամսարը մի պարբերութեամբ ամփոփում է մինչ 1918 հայերի ակնկալիքներն ու չիրականացած յոյսերը. «1914 թուին Ռուսն ըսաւ, թէ հայուն ինքնավարութիւն կու տամ: Այս խօսքերուն վրայ վեց ժամ չանցած՝ Պետերբուրգ հասան հայուն խնամախօսներն, ըսելու, թէ՝ կը սիրեմ քեզի: Սակայն երբ հայուն յայտնի եղաւ, թէ անիկա Հայաստանը կ'ուզէ առանց հայու՝ արեւ զայն եւ ճամփայ ընկաւ դէպի Փարիզ: Երբ տեսաւ Ֆրանսա Կիլիկիա կ'ուզէ՝ արեւ զայն ու գնաց Անգլիոյ առաջ ծունկ չոքելու, իսկ երբ Անգլիա Ղարաբաղն ու Լոռին չտուաւ, արեւ զայն ու գնաց իր խոցուած սիրտն Ամերիկային բանալու: Ամերիկան խղճաց Հայաստանին, կաթ ու յոյս տուաւ, եւ արով ալ կ'ապրի ան մինչեւ օրս»¹⁶:

Այս թերթթնում անդրադառնում է նաեւ Հայաստանի ներքին կեանքին, որը եւս խաթարուած էր: Երգիծաբանի դիպուկ օրինակը ցոյց է տալիս, որ մարդիկ զինուորագրուած էին բանակին յատկացուած պարէնից ու ռազմամթերքից օգտուելու համար միայն. «Մինա՛ս, կնիկ-տղաս քեզ ամանաթ, կօշիկս ծակուեր է, երթամ զինուոր գրուեմ, կօշիկ մը հագնեմ զամ...»¹⁷: Իսկ երբ հերթը հասաւ կռուելուն, զօրահաւաքը նմանուեց «ճանճ բռնելու»: Բոլոր երիտասարդները համատարած փոխում էին անձնագրերը զինուորական տարիքից անելի մեծ կամ փոքր համարուելու համար:

«Տրամադրութեան Տակ» թերթթնում տեսնում ենք, որ զինուորագրումից խուսափելու հազար ու մի ձեւ գտած հայերից ոմանք ճառախօսներ էին դարձել, ոմանք՝ ծերեր, շատերը՝ անզաւակ հայրեր, միւսներն էլ՝ բազմազաւակ հայրեր: Սակայն ամէնից անելի ատելիւն այդ ժամանակ «տրա-

մադրութեան տակիններ» դասակարգն էր: Սրանք այն մարդիկ էին, ովքեր զինուորագրման հենց առաջին օրից դիմել էին Ազգային հորհուրդ ու իրենց ծառայութիւնները առաջարկել, սակայն հարկ եղած ժամանակ նրանց ոչ մի տեղ գտնել հնարատր չէր: Այս դասակարգի մարդիկ իրենց միասնեից առաւել էին համարում ու վիրատուում էին, որ իրենց ուղարկում էին մարտի դաշտ. «Երեւակայէ՛, զօրակոչն յայտարարուելուն՝ առաջինն ես եղայ, որ ինքզինքս դրի իր «տրամադրութեան տակը»։ սակայն այսօր իմ բոլոր անձնուիրութեան փոխարէն՝ այդ նոյն հորհուրդն ինձի ի՞նչ ըսէ աղէկ. «Ճակատը մեկնէ՛ ու զէնք վերցուր...», քեզի կը հարցնեն. աս ըսելու խօսք է, որ կ'ընէ ինձի. չի՞ մտածեր արդեօք թէ արով ինչ վտանգի կ'ենթարկէ կեանքս: Մէկ հարցնող ըլլայ՝ ծօ՛, Ազգային հորհուրդ, ես եթէ ճակատն երթալու ըլլայի, ինչու՞ ինքզինքս քո տրամադրութեան տակը կը դնէի, ճակատին ճամփան չէի՞ գիտեր...»¹⁸:

Լեւ Կամսարը դասալքութեան արմատները տեսնում եւ դրանց անդրադառնում է «Նոր Դասակարգեր» թերթօնում: Հայ ազգի իւրաքանչիւր զաւակ ցանկանում է թագաւոր լինել, առանց հաշուի առնելու, որ թագաւոր կարող է դառնալ միայն մէկը. «Կան ազգեր, որոնք սրտի ամբողջ խորերէն «ա՛խ» կը քաշեն մեծ մարդ մը ունենալու համար, սակայն պարագան այնպէս մըն է բերեր, որ այսօր հայ ազգը կսկիծով կը տեսնէ, որ պզտիկ մարդ մը չունի իր մէջը»¹⁹: Ուստի երգիծաբանը խնդրում է Աստծուց. «Տէ՛ր, դուն զինուոր դրկէ ու Հայաստանն ազաւրէ տաճիկներէն՝ ալ մի խառնուիր: Ես մարախի նման իշխաններ կը հանեն ազաւորած երկիրը կառավարելու համար, Տէ՛ր...»²⁰:

Լեւ Կամսարը անկասկած մեծ ու յանդուգն հայրենասէր էր: Իր թերթօններում նա անդրադառնում էր իրեն եւ ազգին յուզող շատ խնդիրներին, որոնց մասին ժամանակի լրագրողներն ակնարկ անգամ վախժնում էին անել: Նրա դարասկզբեան գործերում յաճախ հանդիպում ենք Դաշնակցութեան գործիչներին:

Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ այս թերթօնները լցուած են ատելութեամբ՝ այդ մարդկանց հանդէպ, սակայն, խորը հայեացք ձգելով, նկատում ենք, որ սա պարզապէս առողջ քննադատութիւն է, փորձ՝ առարկայական աչքերով քննելու ժամանակի գործող անձանց եւ վեր հանելու նրանց թերութիւնները՝ դրանք յետագայում կծու երգիծանքի կախարդիչ ուժով բուժելու համար:

Երգիծաբանը հաւատ չէր ընծայում արեւմտեան դիւանագիտութեանը, նրանց տուած կեղծ խոստումներին: Նրա գրիչն անխնայ ծաղրում էր այն ազգային գործիչներին, ովքեր հիմնովին հաստատուել էին Եւրոպայում ու փորձում էին Հայաստանի համար անկախութիւն ստանալ իրենց «մեծ» դաշնակիցներից, սակայն այդպէս էլ որեւէ դրական արդիւնքի չէին յանգում: Այդ հարցի վերաբերեալ իր դիրքորոշումը շատ լաւ արտայայտուած է «Բժիշկները» թերթօնում: Նա «Հայկական Հարցը» համեմատում է եր-

կար տարիներ անկողնուն զամուած մի հիւանդի հետ, որի բժիշկները՝ անթիւ-անհամար ազգային գործիչները, ոչ մի բուժում չեն անում:

- *Օ՜ք, ճանըմ, թողէք երթամ մեռնիմ,- կ'ըսէ փասն փարի անգամ մը հիւանդը ուրբի ելնելով, բայց բժիշկները դէմը կը կտրեն:*

- *Խղճա մեզի, չէ՞ մենք ալ քեզմով կ'ապրինք*²¹:

Լեռ Կամսարի թերթօններում այս ազգային գործիչները ներկայանում են որպէս մորթապաշտ, խաբեբայ ու կեղծատր, որ միայն դատարկ յոյսեր են տալիս Մայր Հայաստանին, մինչդեռ իրենք, իրենց տիկնանց հետ թեւանցուկ արած, զբօսնում են Սենայի ափերով, հիանում էյֆէլի Աշտարակից բացուող հոյակապ տեսարանով ու վայելում Ջենովայի առատ բարիքները:

Հայաստանի անկախութեան համար իրենց ամբողջ կեանքը նուիրած Ահարոնեանի, Վարանդեանի, Պօղոս Նուպարի եւ այլոց ընտրած ճանապարհները՝ ըստ երգիծաբանի, նրանց ոչնչի չէին կարող յանգեցնել: Լեռ Կամսարը բազմիցս համոզուել էր դրանում. «*Կոխով միայն կարելի է ազատութիւն ձեռք բերել, որ դուրսի օգնութեան վրայ յուսալը փոխադրութիւն էր*»²²:

Այդ բանագնացութիւնները միայն անձնական օգուտ տուեցին ազգային գործիչներին, իսկ ազգին մնացին միայն չիրականացուած երազանքներ ու յուսախաբ, տանջալից օրեր: Նուրբ երգիծանքով երգիծաբանի գրիչը գտնում ու հարուածում է բոլոր-բոլորին, ովքեր ամենաչնչին թերացում են ունեցել իրենց ազգային պարտականութիւնները կատարելիս: Իր թերթօններում տեսնում ենք հասարակական ու քաղաքական շատ գործիչների ու բախում նրանց անպտուղ գործունէութեանը: Վարանդեանի մասին նա գրում է. «...*հայկական դարի բերումով աշխարհիս բոլոր քաղաքները, գիւղերն ու ամառանոցներն իր հինգ մարին պէս կը ճանչնայ ու աշխարհագրութեան ինչ գիրք ալ ձեռք վերցնէ, երեսին մէջ ութը սխալի փակ սփորագրելու կարողութիւնը ունի*»²³:

Նրա գործերից շատ-շատերում երեսում է իր ստեղծած՝ մեզ համար անսովոր ու զաւեշտալի Աւետիս Ահարոնեանը: Օրինակ՝ «Յունաստանի Ահարոնեանը» թերթօնում նա Ահարոնեանին համեմատում է Յունաստանի պատուիրակ Վենիզելոսի հետ²⁴: Ի տարբերութիւն Ահարոնեանի՝ յոյն պատուիրակը Եւրոպա էր եկել մէն-մէնակ, առանց կնոջ, տղայի, հարսի կամ զոքանչի ուղեկցութեան ու առաջին իսկ օրը, հիաթափուելով արեւմտեան դիւանագիտութեան կեղտոտ խաղերից, որոշել. «*Ձէ, ախպար, դիւանագիտութիւնը իր բոլոր «մազուրկա»ներով ու արարական պարմութիւններով փոփ քեզ: Առօրու եւեթ եկածս ճամփով եր կ'երթամ, իմ ուժերովս կրցայ՝ կը կռուիմ, չկրցայ՝ թուրքին ուրջը կ'իյնամ՝ թողութիւն կը խնդրեն*»²⁵:

Մինչդեռ Ահարոնեանի համար անհասկանալի էր դա: Այդքան տարիների ընթացքում նա հասցրել էր տիրապետել եւրոպական դիւանագետ-

ների հետ հանդիպումներ կազմակերպելու այնպիսի մանրամասների, որը զարմանք կարող էր առաջացնել ցանկացածի մօտ: Ինքը՝ Ահարոնեանը, դա արհեստ էր համարում, որով ապահովում էր իր ապրուստն ու մի բան էլ կնոջ համար զարդեր գնում: Եւ երբ Վենիզելոսը անյուսուփանից սկսում է արտասուել, Ահարոնեանը խորհուրդ է տալիս՝ «*եթէ կու լաս, լուսամուտին առաջը կայնէ, որ Եփրայան տեսնէ*»²⁶:

Ահարոնեանի դերասանական վարպետութեանն ու լալու արուեստին երգիծաբանը անդրադարձել է բազմիցս: Անգամ իր ոչ-քաղաքական թերթօններում մենք հանդիպում ենք նրան արտասուելիս կամ ընդհակառակը՝ ճառով լսարանին յուզելիս: Լեռ Կամսարը «Մեծ Ճառ» թերթօնում սրամտօրէն նկատում է, որ հայրենիքի համար արտասուելիս աչքի լոյսը կորցրած ազգային գործիչը իբրեւ «աշխատանքի ինվալիդ»²⁷ արժանի է վարձատրութեան. «Ի կարարումն կուսակցութեանս հրահանգի, Ահարոնեանը ներկայացուցեր է մեզի 56 փարու լալու սփած: Կուսակցութիւնս առարկեց այդ սփածին, ինչու որ վկայականին մէջ հաշուի է առնուած նաեւ ծնած առաջի երկու փարուայ լացը, շրջան մը, երբ մենք բոլորս ալ կու լանք՝ եւ ապոր համար ոչ ոքի դրամ չի փրոփր»²⁸:

Լեռ Կամսարի աչքից, հետեւաբար՝ նաեւ գրչից չի վրիպում ցանկացած բան, որ կարող էր խոչընդոտել «Հայկական Հարցի» դրական լուծմանը: Ազգի համար այդ բախտորոշ շրջանում նա ներկայացնում է Հայ Դատի երկու ամենակարեւոր ու ազդեցիկ մարդկանց՝ Պօղոս Նուպար փաշայի եւ Ահարոնեանի անհաշտութիւնն ու անհանդուրժողութիւնը միմեանց հանդէպ: «Ռումը» թերթօնում կարդում ենք. «...եթէ Ահարոնեան պիտի ըլլայ նախագահը՝ համաձայն եմ, ազգը թող վերանայ»²⁹: Աւելի բարձր պաշտօնների ու միմեանց երեսը այլեւս չտեսնելու համար Հայ Դատի անգամ ամենանուփրեալ պաշտպանները համաձայն են Հայաստանի ու հայ ժողովրդի վերացման մտքի հետ:

- Պայմանով, որ ինծի ամենահիսիսային հանրապետութեան նախագահութիւնը տաք...ամառները,- ըսաւ Պօղոս փաշան՝ գրիչը թաթախելով:

- Այն արեւն ինծի ալ հարաւային բեւեռին քով տեղ մը տուէր,- յարեց Ահարոնեանը»³⁰:

Կամսարը անընդունելի է համարում երկրի համար այդքան ծանր ժամանակահատուածում ժամավաճառութեամբ զբաղուելը, դատապարտում է երկրի ողբերգական վիճակը յանուն իրենց անձնական շահի օգտագործելը կամ յարմարաւէտ կեանք վարելու իրենց ազգային գործիչների ձգտումները: Անգամ եթէ այդ ամբողջ զոհողութիւնները արել են ազգի համար, ապա՝ «Ի՞նչ մեծ գործ է անկախութիւն ուզելը.- դաշնակիցք, ֆալան. կամ ֆալանքեաս, մեզի անկախութիւն տուէր: Պրծաւ գնաց: Արիկա ըսելու համար պէտք է քսանվեց հոգի՝ երթան ու քսանվեցն ալ կնիկնին հետերնին՝ փանին»³¹:

«Հայկական Հարցը» իրապէս հետաքրքրում էր ոչ միայն հայերին, այլև մի շարք օտարերկրացի հայաստանցիներին: *Խորհրդային Հայաստան* օրաթերթի մի համարում քննադատութիւն է հնչում շուէյցարացի մի քահանայի՝ Քրաֆտ Բոնարի³² հասցէին, ով մեծ հայասեր էր ու իրապարակած իր գրքովում կոչ էր անում երոպական պետութիւններին արդարամիտ լինել հայոց հարցի առնչութեամբ: Այս իրապարակմանն արծագանգել է երգիծաբանը իր «Նամակ Քրաֆտ Բոննարին՝ Ի Ժնեւ» թերթօնով: Կամսարը կշտամբում է նրան հայ ազգը սիրելու ու նրան ամէն կերպ օգնել փորձելու համար: Երգիծանքի շնորհիւ նրա կշտամբանքը անելի շատ շնորհակալութեան է նմանում: Այնուամենայնիւ նա խնդրում է հայասերին չսիրել հայերին, քանի որ սէրը դիւանագիտութեան մէջ անգոր է, ու հայերը իրենց յոյսը պէտք է դնեն ոչ թէ նմանատիպ սիրոյ վրայ, այլ իրենց ուժերի: Կամսարը գրում է. «Երբ կը տեսնէք, որ պրելյութիւնը «սիրելէն» անելի օգտակար է հայուն՝ ինչու՞ կը շարունակէք սիրել: Իսկ եթէ «սիրելն» արհեստ մըն է ձեզի համար ու անով կ'ապրիք, լաւ չէ՞, որ ձգէք, այդ արհեստով ապրին անոնք, որոնք ուրիշ գործ ընելու անկարող են: Սկսած հայ գործիչներ կան, որոնք այսօր Եւրոպա կը թափառին. անոնք ոչ լեզու գիպեն, ոչ արհեստ ունին. թողէք այդ արհեստն անոնց, իսկ դուք զբաղուէք անասնապահութեամբ կամ մեղուաբուծութեամբ՝ գործեր մը, որոն համար ծեր երկիրն սպեղծուած է»³³:

«Հայկական Հարցի» լուծումը այնքան էր ձգձգում, որ Լեռ Կամսարը դրա իրականացումը տեսնում էր միայն երազում: Իրականութիւնը միշտ նոյնն էր ու դաժան՝ «հայերը հայ ըլլալուն համար կը կոպորոյին, հայկական պատուիրակութիւնը ծնկաչոք կը խնդրէ, դիւանագիտութիւնը կը խոստանայ...»³⁴: Իսկ երազում Հայկական Հարցը լուծում է Հայաստանը երկրագնդի երեսից ջնջելով միայն: Հայ ազգային պատուիրակները՝ իրենց կանանցով ու երեխաներով, հասցրել էին ծանծրացնել Եւրոպային:

Հաշուի առնելով մեծ դաշնակիցների հաշունենկատութիւնը ու շահախնդրութիւնը՝ Լեռ Կամսարը քաջ գիտակցում էր, որ խնդրանքներով ու աղերսներով երկրի հարցը չի լուծուի: Իր «Հայկական Տու՛ն, Թէ Նաթի Սկլար» թերթօնում նա նկատում է, որ երեսուն տարուայ մէջ չլուծուած Հայկական Հարցը չի լուծուի նաեւ արիւնով. «Անգլիա սա համաշխարհային պատերազմին երկու միլիոն անգլիացի կոպորել տուաւ, ու այսօր ալ Գերմանիայէն իր զոհերու հոգիները չէ, որ կը պահանջէ, այլ...ոսկի»³⁵:

Այսպիսով, հաշունենկատ դաշնակիցներին պէտք էր գոհացնել, իսկ կովկասեան տարածաշրջանում դա հնարատր էր միայն սեւ ոսկով՝ նախով: Արծագանգելով օրուայ իրատապ թեմաներին՝ Լեռ Կամսարը գրում է. «Անգլիան կ'ուզէ հայկական տուն մը Կովկասեան նապերուն մօտիկ»³⁶: Ուստի անհրաժեշտ էր Հայաստանը դատարկել ու մէջը նախ լցնել: Սակայն, ինչպէս երգիծաբանն է նշում՝ Հայաստան դատարկելը նոր եզր չէ:

Ինչպէս նկատեցինք, ազգային գործիչը Եւրոպայում լալկան է ու պնդե-
րես, մինչդեռ հայրենիքում կամսարեան ազգային գործիչը լուռ է ու
հպարտ: Թում է՝ նա զուրկ է աշխարհիկ ուրախութիւններից եւ այդպէս
շարունակուելու է այնքան ժամանակ, քանի դեռ իր սիրասուն հայրենիքը
իր բաղձալի անկախութիւնը ձեռք չի բերել: Սակայն երգիծաբանը կոչ է
անում չհաւատալ ազգային գործչի այս «տխուր ու մտածկոտ» կերպարին.
«Բարեկամ... հաւաքաւ, որ ան կը խնդայ, կ'երգէ, կ'ուրէ, կը պարէ, գիշեր-
ները շար հանգիստ կը քնանայ ու երագին մէջ եթէ ազգն ալ անոր տես-
նէ, ան ազգին չի տեսներ»³⁷:

«Էքստերիտորիալ Դերձակներ» թերթօնում տեսնում ենք Նիկոլ Աղ-
բալեանին՝ իր «Էքստերիտորիալ Հայաստան» փառատենչ ծրագրով: Ըստ
երգիծաբանի՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան անկումից յետոյ
էլ քաղաքական գործիչը չի ուզում կորցրած լինել իր իշխանութիւնը.
«Էքս-տերիտորիալ Հայաստանին» ծրագիրը, որ այսօր կը յղանայ
Աղբալեանը եգիպտոսին մեջ, ոչ այլ ինչ կը նշանակէ, եթէ ոչ՝

- Ամէն այն տեղուանք, ուր տիար Աղբալեանը ուրք կը կոխէ,
Հայաստան կը կոչուի:

Մինչդեռ սխալմամբ հայ պարմագիրներն ըսեր են թէ՝ «Հայաստան կը
կոչուի այն երկիրը, ուր ծներ ու սնուեր է հայ ժողովուրդը...»³⁸:

«Հայկական Առասպելներ»ում անդրադարձել է Սիմոն Վրացեանի
«450 էջ»անոց³⁹ Անկախ եւ Միացեալ Հայաստան գրքին, որը երկար-
բարակ պատմում է «Հայաստանի անկախութեան» մասին: Նրա պատմու-
թեան ձեռնարկը առասպելի է նմանում, ու Կամսարի վկայութեամբ՝
փաստերն այստեղ խիստ ուռճացուած են, երբեմն էլ չեն համապատաս-
խանում իրականութեանը. «...Ըստ պատմութեան, հայերը, վրացիք եւ
Ադրբեջանը ընդհանուր լեզու գրնելով, Թիֆլիսին մէջ Սէյն կ'ուզէին շինել,
որ ազգայունն ազգամիջեան պատերազմէն: Տաճիկը տեսնելով այս բանը՝
խառնակեց անոնց լեզուն, եւ հայերը անջատուելով, եկան Գեղամայ Ծո-
վին եգերքը բնակութիւն հաստատեցին, կազմելով միացեալ եւ անկախ
Հայաստան մը, որու հզօրութեանը առջեւ Ֆրանսիան ու Անգլիան անգամ
գլխարկ կը հանէին... շոգ օրերուն»⁴⁰:

«Մեծ ճառ» թերթօնում երկարաշունչ ու զանազան ճառով հանդէս է
գալիս Խատիսեանը ու ներկայացնելով Դաշնակցութեան անցած ուղին,
առաջարկում առաջնորդուել իրենց նախկին, անարդիւնաւէտ սկզբունքնե-
րով: Խատիսեանն ինքն է խոստովանում. «Մեր կարարած հերոսութիւն-
ները, ճշմարիտ է, չունեցան անմիջական արդիւնքներ, սակայն երգելու
առաք նիւթ տրուին աշուղներուն իր ժամանակին եւ մեզի ալ տրուին օրա-
րոպեան մէջ՝ յիշողութիւններ, որ սա տաս տարի է, օր ու գիշեր կը յիշենք
մեր բոլոր թերթերու մէջ, ու դեռ վերջ չունի»⁴¹:

Ազգային գործիչներին զուգահեռ նա քննադատում է «անցեալ անկա-
պար» ազգասէրներին, ովքեր ազգասէր են միայն խօսքերով ու խոստում-

ներով, իսկ երբ գալիս է գործելու ու օգնելու ժամանակը, անմիջապես ետ են կանգնում իրենց տուած խոստումներից ու վախկոտի պէս թաքնուած իրենց կանանց թիկունքում՝ արդարացում գտնելով իրենց անգործութեանը. «Ու վերջ ի վերջոյ, բազազ Սյոնիանը բան մը չգտաւ ազգին: Բայց ազգասէր մարդ էր: Մեղաւորը ազգն էր, որ այսպէս անժամանակ ազապոնեցաւ: Ամէն բան իր ժամանակն ունի...»⁴²:

Ինչպէս արդէն նշել էինք, նրա թերթօնների մի ստուար զանգուած նուիրուած է կուսակցական գործիչներին՝ մասնատրապէս դաշնակցականներին ու նրանց գործունէութեանը, քանի որ դարասկզբին նրանք էին, որ տնօրինում էին հայի ճակատագիրը ու նրանց գործողութիւններով էին հիմնականում պայմանատրուած մեզ յայտնի պատմական անցքերը: Այս թերթօնները խորհրդային իշխանութիւնը յետագայում օգտագործեց դաշնակցութեան դէմ՝ որպէս հակաքարոզչութիւն: Այս մասին Լեո Կամսարը գրում է. «Ես կանգնած եմ բոլշեփկեան ու դաշնակցական կուսակցութիւններէն հաասար հեռատրութեան վրայ: Իմ գրուածքներին մեծ մասը դաշնակցութիւնը կը ծաղրէ, սակայն ոչ անոր համար, իհարկէ, որ բոլշեփկները պակասութիւն չունին, այլ որովհետեւ վերջիններս առայժմ պակասութիւն չեն ուզեր ունենալ... հրապարակուած»⁴³:

Երգիծաբանն իր ամբողջ կեանքում մնաց անկուսակցական եւ երբեք չյարեց որեւէ քաղաքական ուղղութեան, քանի որ քաջ գիտակցում էր այդ կուսակցութիւնների խաղացած բացասական դերը: Այս կուսակցութիւնները, որոնք շատ հարցերում առանձնապէս չէին տարբերում իրարից, անընդհատ անիմաստ տարակարծութիւնների մէջ էին, որը պառակտում էր երկիրը ու ներսից քայքայում միասնականութիւնը:

«Գրատր Պրոպագանդիստներ» թերթօնում ներկայացուած են կեղծ ու շինծու կուսակցականներ, ովքեր կուսակցական են իրենց տետրակների գաղափարախօսութեամբ միայն: Անոնց համոզմունքները փոխա⁴⁴ կ'ընկնէին մի գիշերուայ ընթացքում, եթէ գիշերը որեւէ մէկը պատահաբար կամ դիտմամբ փոխէր տետրակները:

«Ազգային Հիմն» ստեղծագործութեան մէջ երգիծաբանը արծազանգել է 1917ի ազգային հիմն գրելու կոչերին: Այստեղ կրկին իյայտ է գալիս կուսակցութիւնների անհաշտութիւնը ու դրա պատճառով առաջացած դժուարութիւնները, երբ իրաքանչիւր ցանկանում է իր գաղափարախօսութիւնը տեսնել հիմնի մէջ: Մէկ այլ խնդիր է կուսակցութիւնների անթիւ-անհամար քանակը. անգամ եթէ ամէն կուսակցութեան մի տուն նուիրէին, ազգային հիմնը վերջ չէր ունենայ. «...կուսակցական շերտատրութեանց բերումով այնքան երկար դուրս եկաւ այդ հիմնը, որ ազգը եթէ առաւօտ արշալոյսին սկսէր երգել միջին արագութեամբ, յաջորդ կէսօրին հագիւ աւարտէր... Խորհեցայ՝ ամբողջ 8 ժամ ազգ մը բերանը բաց ձգէ, ինչ է թէ հի՛մն մը պիտի երգէ՝ ապա ալ անյարմար է»⁴⁵:

Թերթելով խորհրդային մամուլը անկասկած չենք գտնի մի տող, որ կը քննադատեր խորհրդային իշխանություններին: Փոխարենը, անթիւ-անհամար են նրանց գովերգող համարները: Անգամ այս միջավայրում Կամսարը մնաց առարկայական ու անտեղի ոչ մի տող չգրեց յօգուտ իշխանություններին: Սակայն Սարգիս Լուկաշինը, ով *խորհրդային Հայաստան* թերթի խմբագիրն էր ու երգիծաբանի մեծ բարեկամը, պարբերաբար տպում էր նրա «չէզոք» կամ դաշնակցութեանը քննադատող թերթսոսները:

խորհրդային Հայաստան օրաթերթի մի համար ամբողջութեամբ նուիրում էր Շիրակի ջրանցքի կառուցմանը: Այդ համարում տեղ է գտել նաեւ երգիծաբանի «Դէպի Շիրակի Ջրանցք» թերթօնը: Ականատեսի առարկայական աչքով երգիծաբանը նկարագրում է ջրանցքը. «Տիտանական գործ է,- ըսի,- ասորա-բարեկական դարաշրջան յիշեցնող»⁴⁶: Այստեղ բախում ենք դաշնակցականների յամառութեանն ու անտեղի սկզբունքայնութեանը. «Ա՛խ, երանի մէկ րոպէով դաշնակցական չլլայի՝ խոստովանելու սա գործին մեծութիւնը...Բայց 30 տարի ծառայած եմ այդ կուսակցութեան, ու հիմա ելնեմ թունէլի մը համար սկզբունքս խախտե՞մ, դժուար գործ է»⁴⁷:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Ամփոփելով, Ա. Համաշխարհային Պատերազմի եւ յետպատերազմեան դժուարին տարիների (1910-22) հայ ազգին ու նրա պատմութեանը վերաբերող թերթօսների ուսումնասիրութիւնը՝ կարող ենք արձանագրել, որ Կամսարի թերթօսներից իրաքանչիւր խճանկարի մի մաս է, որոնք ի մի բերելով՝ կարող ենք ստանալ հայ ժողովրդի դժուարին ժամանակահատուածի՝ Ի. դարի սկզբի պատմութեան ճշգրիտ պատկերը: Երգիծաբանը ոչ միայն անաչառ նկարագրում է պատմական անցքերը, այլեւ տալիս որոշակի գնահատականներ դրանց՝ մատնանշելով ու ծաղրելով հիմնական թերութիւնները, ինչը հնարատրութիւն է տալիս յետագայ սերունդներին օգտուել նախորդ գնահատականներից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Թերթօնը (ֆրնս.՝ feuilleton-թերթ, թերթիկ) գեղարուեստահրապարակախօսական սեռի ամենաբարդ եւ հետաքրքրաշարժ տեսակներից մէկն է, որտեղ սուր կերպով դատապարտում են մարդկային ամենատարբեր թերութիւններն ու հասարակութեան բացասական կողմերը: Այն հիմնականում լոյս է տեսնում թերթերում ու ամսագրերում եւ աչքի է ընկնում ոճի թեթեւութեամբ, խօսքի դիպուկութեամբ եւ սուր երգիծանքով:

² Համիդեան, երիտթուրքերի, ցարական (կայսերական) Ռուսաստանի, Դաշնակցութեան, բոլշեւիկների:

³ Հեղինակի տպումած եւ անտիպ գրականութեան ցանկը տե՛ս՝ <http://lerkamsar.com/heritage/heritage.html> կայքում (29.01.2018) :

- ⁴ www.lerkamsar.com, <https://www.facebook.com/%D4%BC%D5%A5%D5%BC-%D4%BF%D5%A1%D5%B4%D5%BD%D5%A1%D6%80-Ler-Kamsar-260317210675680/> :
- ⁵ Սամուէլ Մուրդեան, *Գրական Հանգրուաններ, Գիրք Բ*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2007, էջ 61:
- ⁶ Լեո Կամսար, *Գրաբար Մարդիկ*, Երեւան, «Հայպետհրատ», 1959, էջ 52:
- ⁷ Լեո Կամսար, *Խաղը Ու Խայտառակ Աշխարհ*, Երեւան, «Հայաստան», 2008, էջ 32:
- ⁸ Լեո Կամսար, *Գրաբար Մարդիկ*, էջ 111:
- ⁹ Նոյն, էջ 112:
- ¹⁰ Լեո Կամսար, «Համառոտ Ձեռնարկ Հայոց Պատմութեան», *Խորհրդային Հայաստան Օրաթերթ*, 1924, թիւ 174:
- ¹¹ Լեո Կամսար, *Խաղը Ու Խայտառակ Աշխարհ*, էջ 126:
- ¹² Նոյն, էջ 66:
- ¹³ Նոյն, էջ 69:
- ¹⁴ Նոյն, էջ 78:
- ¹⁵ Նոյն, էջ 83:
- ¹⁶ Նոյն, էջ 84:
- ¹⁷ Նոյն, էջ 71:
- ¹⁸ Նոյն, էջ 93:
- ¹⁹ Լեո Կամսար, *Միհայրորեակ*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1980, էջ 34:
- ²⁰ Նոյն, էջ 34:
- ²¹ Նոյն, էջ 129:
- ²² Լեո Կամսար, *Երկեր*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1988, էջ 49:
- ²³ Նոյն, էջ 166-7:
- ²⁴ Էնֆթերիոս Վենիզելոս՝ յոյն պետական, քաղաքական գործիչ: 1910-32՝ տարբեր ժամանակահատուածներով եղել է Յունաստանի վարչապետը: Նրա իշխանութեան օրօք Յունաստանը մշտական պայքար է մղել Թուրքիայի դէմ:
- ²⁵ Լեո Կամսար, «Յունաստանի Ահարոնեանը», *Խորհրդային Հայաստան Օրաթերթ*, 1922, թիւ 281:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ Անկար:
- ²⁸ Լեո Կամսար, *Խաղը Ու Խայտառակ*, էջ 206:
- ²⁹ Լեո Կամսար, *Երկեր*, էջ 138:
- ³⁰ Նոյն, էջ 139:
- ³¹ Նոյն, էջ 132:
- ³² Էնտոնի Քրաֆտ-Բոնար՝ շուէյցարացի հոգեւորական, ում նախաձեռնութեամբ 1896ին Լոզանում գումարումը է Շուէյցարիայի կանտոնների (նահանգների) ներկայացուցիչների ժողով, որտեղ որոշում է կայացուել Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան անհրաժեշտ օգնութիւն ցոյց տալ: Միեմոյն ժամանակահատուածում կրկին նրա ջանքերով ստեղծուել է «Հայերի Օգնութեան Շուէյցարական Կազմակերպութիւն»ը, որը գործել է մինչեւ 1922:
- ³³ Լեո Կամսար, *Գրաբար Մարդիկ*, էջ 177:

³⁴ Լեո Կամսար, *Երկեր*, էջ 139:

³⁵ Նոյն, էջ 140:

³⁶ Նոյն, էջ 140:

³⁷ Լեո Կամսար, *Գրաբար Մարդիկ*, էջ 70:

³⁸ Լեո Կամսար, «Էքստերիտորիալ Հայաստան», *Խորհրդային Հայաստան Օրաթերթ*, 1924, թիվ 160:

³⁹ Իրականում 64 էջ է, բայց քանի որ թերթում գրուել է 1924ին, պարզ է դառնում, որ հեղինակը նկատի ունի հենց այս գիրքը (*Հայաստանի Հանրապետության* ծաալուն աշխատությունը լոյս է տեսել անելի ուշ՝ 1928ին):

⁴⁰ Լեո Կամսար, *Խաղը Ու Խայրառակ*, էջ 212:

⁴¹ Լեո Կամսար, *Միհայրորեակ*, էջ 88:

⁴² Լեո Կամսար, *Երկեր*, էջ 81:

⁴³ Լեո Կամսար, *Խաղը Ու Խայրառակ*, էջ 262:

⁴⁴ Նոյն, էջ 59:

⁴⁵ Նոյն, էջ 49:

⁴⁶ Լեո Կամսար, «Դէպի Շիրակի Զրանցք», *Խորհրդային Հայաստան Օրաթերթ*, 1924, թիվ 194:

⁴⁷ Նոյն:

THE SERIES OF LER GAMSAR RELATED TO THE ARMENIAN NATION AND ITS HISTORY IN 1910-THE 1920S

(Summary)

ANNA BABAYAN

annababayan646226@gmail.com

The paper focuses on the political serialized writings of one of the greatest Armenian humorists, Ler Gamsar. These series reflect the dire life of the Armenian nation in the first two decades of the 20th century.

They can be considered as chapters of Armenian history written by Ler Gamsar. The author notes that these series narrate well known stories from a different perspective and stresses that the author's piercing eyes have noticed and cold-bloodedly registered what other authors have missed due to either bias or lack of daring.

Gamsar's healthy criticisms basically touch upon the performance of Armenian national leaders, who held responsibility for the nation's destiny. The characters of his series are normal people, party activists, mostly known through history books. In certain cases Gamsar personifies the foreign country and develops a dialogue that enables the reader to better understand and interpret the conditions and the situation of the time.